

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՒՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ-ում և միութենական հանրապետութիւններում գործող քրեական որենադրութեամբ, լրտեսութեան, վնասարութեան դեմ, պայթեցումներ, խորտակումներ, մարդկային զոհերով կատարված հրկիզումների կազմակերպման և այլ դիվերսիոն ակտերի դեմ պայքարելու համար, վորպես քրեական պատժի միջոց սահմանված և ազատազրկումն 10 տարուց վոչ ավելի, իսկ պետական հանցանքների ավելի ծանր տեսակների համար՝ պատժի գերազույն չափը (գնդակահարում) :

Այդ տեսակ հանցագործութիւնների դեմ հետագա պայքար մղելու և դատարանին այդ հանցագործութիւնների համար վոչ միայն պատժի ավելի բարձր չափ (գնդակահարում) ընտրելու, այլև ավելի յերկար ժամանակով ազատազրկելու հնարավորութիւն տալու համար, ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Ե՝

1. Ի փոփոխումն «ԽՍՀՄ-ի և միութենական հանրապետութիւնների քրեական որենադրքի զլխավոր հիմունքների» 18-րդ հոդվածի, սահմանել, վորպես քրեական պատժի միջոց, ազատազրկումն 25 տարուց վոչ ավելի :

2. Առաջարկել միութենական հանրապետութիւնների կենտրոնական գործադիր կոմիտեներին՝ իրենց որենադրութիւնը համապատասխան դադարձնել սույն վորոշմանը :

ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկւա, Կրեմլ
1937 թ., հոկտեմբերի 2

